

վրա պատկերը, որ կանէ խնամական 4 աստիճան, կոնդակով խալած արգելում է: Երկու եղբայր կարող են պատկերը երկու հարազատ քրոջ աղջիկներէ վրա (6 աստ.), իսկ եղբայրը կարող է պատկեր մի քրոջ, երկրորդը եղբայրը երկրորդ քրոջ աղջկայ հետ (5 աստ.): Թոռան թոռները (8 աստ.) կարող են պատկեր, ծոռան ծոռան վրա կարող է պատկեր (6 եւ 7 աստ.): այս կէտը անորոշ է մնացած նոր կարգադրութեան մէջ:

Բայց այդ, չնայ խնդրում անորոշ դրութեան մէջ են մնացած հոգեւոր եւ երեք-ցեղ խնամակալան ազգակցութեան թոյլատրական աստիճանները (духовное родство и трехродное союство):

Հոգեւոր ազգակցութեան աստիճանի որոշումը առաջին անգամ արել է Յուստինիանոս կայսրը՝ արգելելով կնքահօր եւ աննիկի մէջ պատկ կառարել: Տրուելի տիեզերական ժողովը ամուսնական արգելք դրեց նաեւ կնքահօր ու աննամոր մէջ: Բիւզանդական եկեղեցին արգելքը հասցրեց, արեւակցականի նման, 7 աստիճանի: Մեր եկեղեցական կանոններէ մէջ ոչ մի կարգադրութիւն չի կայ այդ մասին, միայն Մաշտոցի մէջ յիշված է, որ քահանան պատկերի պիտի ուշադրութիւն դարձնէ, որ հոգեւոր չնամութիւն չը լինի. իսկ վերջինս ստելով ինչպէս պիտի հասկանալ, բոլորովին անորոշ է:

Այս անորոշութիւնը է տիրում է եւ երեքցեղ խնամութեան մէջ. խնամի ասելով հասկանում ենք երկու ցեղի միութիւնը երկու ամուսնաների միջոցով. երբ այրին ամուսնանում է երկրորդ անգամ, հետ երկրորդ անգամ, այն ժամանակ առաջանում է երեք ցեղի՝ այն է առաջին կնոջ, երկուր կնոջ եւ մարդու ազգականների բարեկամութիւն: Հռոմայական իրաւունքը արգելում էր երեքցեղ խնամութեան 1 աստիճանի պատկ—այսինքն խորթ հօր եւ խորթ որդու կնոջ մէջ կամ խորթ մոր եւ խորթ աղջկայ մարդու մէջ: Ռուսաց 1810, 1841, 1859 թւականների սինոդական բացատրութիւններով փոխվում է բիւզանդական հոգեւոր 7 աստիճանի արգելքը, իսկ անպայման անվանել է համարվում երեքցեղ խնամութեան միայն 1 աստիճանը: Մեր եկեղեցական իրաւունքը, թէեւ ոչ մի գրաւոր փաստաթուղթ չէ որոշել այդ աստիճանները, յամենայն դէպս չէ ենթարկվել յունա-ռուսական կարգադրութիւնների նման զանազան փոփոխութեան, որոնք շատ անգամ հակասական են եղել միմեանց, այլ աւանդական կարգով անփոփոխ պահել է իր ընդունածը կանոնքի մէջ եւ այսօր էլ վարվում է անկախ, ինքնուրոյն կերպով:

Գուցէ եւ գրաւոր փաստաթղթի չունենալն է եղել առիթ, որ վեհափառ Կաթողիկոսը, չունենալով հեղինակաւոր նախնական հիմք նոր

կոնդակի համար, թողել է այդ խնդիրը առ այժմ անկախ, որովհետեւ մեր եկեղեցու իրաւունքի տեսակետից՝ այդպիսի խնդիրների մասին եղած կարգադրութիւնները բոլոր ազգից ընդունվում են այն ժամանակ միայն, երբ ազգային ժողովը կամ ընդհանուր հաւանութիւնը սանկցիա է տալիս այդպիսի որոշման: Պէտք է ի նկատի ունենալ եւ այն, որ թէեւ գրաւոր փաստաթղթի չունենալ, բայց կանոնք 16 դար շարունակ գնացել է իր հասնելով եւ ժողովուրդը կառավարվել է այդքան ժամանակ աւանդական կարգով, իսկ աւանդութիւնը եկեղեցական իրաւունքի ազդեցության մէջ մեծ տեղ ունի: Ուստի եւ այդ աւանդական կարգից կարելի է օգուտ քաղել եւ ներսէն Եւրոպայում շաւղով ընթանալով կարելի է ընդհանուր կարգադրութիւն անել հոգեւոր եւ երեքցեղ խնամական աստիճանների մասին եւս: Այդ բանում կարող են օգնել Կ. Պոլսի համագումար եւ խառն ժողովները, իբրեւ ներկայացուցիչներ թիւրքահայերի, այդպիսի դէպքերում ուղարկելով իրանց կարծիքը եւ համաձայնութիւնը եւ դրանով ընդմիջող ազատելով մեր եկեղեցին պառակտողական ձգտումներից: Մ. Թ.

Պետերբուրգ

ԵՐԿՐԱՆԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱՄԵՆԻՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի երկրաշարժից վրնամականների օգտին:

Աստիճանից՝ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանց 160 ռուբլի (տ. նամակ խմբագրութեան):

Արմաւիրից՝ հայոց եկեղեցիների գործակալից 78 ռուբլի, որ նուիրել են՝ Ա. Տոմարյանի հարսանիքում, Սարգիս Թորոսեանի միջոցով, զանազան անձինք 32 ռ. 50 կ. Ա. Թ. Այվազեան, Ե. Ս. Ալաշկերտեան եւ Ս. Պ. Ալաշկերտեան 5-ական ռուբլի, Թ. Թերզեան 3 ռ., Գ. Կ. Կիրակոսեան 2 ռ., 37 կ., Գ. Ա. Գաւառեան 1 ռ., Մ. Ս. Ալաշկերտեան 50 կ., Խ. Լաւրիա 50 կ., Կալկազակի կայարանի հայերից Ա. Չերքեզեանցի միջոցով 10 ռ. 50 կ., Ա. Զ. Հալաբեանցի միջոցով տեղային հայերից 12 ռ. 80 կ., Մ. 7 կողմիցնայ պատի մարկա: (Հանված է ճանապարհածախս 22 կ.):

Պերսիական քաղաքից (Լիֆլանդիայի նահանգ) Կոնստանտին Պոպովից 75 ռուբլի 80 կ., որը նրա ինքնիշխանի հաւաքել է Պերսիական «Pernausche Zeitung» ցրագիր:

Բալթիկ անից՝ Իշխան Իշխանեանց 10 ռուբլի, որ նուիրել են Եղ. Մովսէսովիչի III մասի նախնանքի ծառայողները: Մ. Ա. Լաւրիա 3 ռ., Ի. Պետրոսեանց եւ Ն. Օհանեան 2-ական ռուբլի, Տ. Տախիշեանեան, Գ. Նազիկեան եւ Ի. Իշխանեան 1-ական ռուբլի:

Սուխումից՝ Գարեգին Յակովլեանից եւ Յարութիւն Քոչանցի 44 ռուբլի, որ հանգանակված է Չարթիկի գիւղի հասարակութիւնից: Նուիրատուներն են՝ Թ. Քէօյեան, Ա. Գ. Ուստեան, Թ. Վ. Չառիկեան 5-ական ռ., Մ. Պոստանեան, Ա. Չառիկեան 3-ական ռ.,

պիտի վճարէ ամեն մի ծխակաւորութեան համար:

Շուտով կը պատրաստվեն պատշաճաւոր ցուցակներ ու մատենաներ, իւրաքանչիւր մի ծրարակաւ, որ կունենայ երեսիւ միւրութեւ պատկ օրհնելու, ննջեցեալ թաղելու եւ այլն, կը բարեհաճի սահմանված տուրքը նախ տանել վրձարել երեցիկութեան, ստանալ նրանից անգործագիր. այս անգործագիրը կը ներկայացնէ քահանային. վերջինս կերթայ, իր պաշտօնը կը կատարէ առանց որ եւ իցէ դորձ ունենալը կը գրամի առիթով: Առ այժմ, քանի տպագրված ցուցակներ, կործանուող մատենաները չը կան, դրամները ստանում ենք քահանայներս ընդհանուր ժողովից հաստատված հրահանգի համեմատ եւ յանձնում ենք երեցիկութիւն: Տեւր օրհնելու ժամանակ քահանայներս ունենք մեզ հետ մատենան, ուր նշանակվում է հատուցված փողը: Արդէն բաթումցի հայը գիտէ, որ ծխակաւորութիւնների առիթով իրանց քահանան ոչինչ չէ ստանում իրանից իր անձնական գրպանի համար: Բաթումցի հայը իր փողերն ու տուրքը ուղղում է իր եկեղեցուն, իր հանրական սրբազան հաստատութեանը: Բաթումի քահանան իր սպասաւորութիւնը, իր ծառայութիւնը մատուցանում է եկեղեցուն-ժողովրդին եւ իր վարձը, իր աշխատութեան գնահատութիւնը ստանում է եկեղեցուց-ժողովրդից: Բաթումցի հայը գիտէ, որ իւրաքանչիւր մի ծխակաւորութեան համար ունի մի որոշ դոմար վճարելու իր եկեղեցուն—այլ եւս ոչինչ: Ոչ քահանային մատաղի էրի է ուղարկելու, ոչ մեռելի կողոպուտ, ոչ ս. սեղանի հաւ ու չափար, ոչ թաղի ու զառի բրէհ եւ այլն: Բաթումի քահանան ազատ մանում է ամենքի տունը այլ եւ այլ չորհրդաւորութիւնների առիթով, մասնաւոր թէ պաշտօնական, տալիս է իր օրհնութիւնները առանց աչքերը տան տիրոջ գրպանին յառելու...

Կ. Աւետիսեան 1 ռ., Ն. Չառիկեան 60 կ., Թ. Տէփէյեան 2 ռ., Խ. Չառիկեան 1 ռ. 82 կ., Մ. Քոչեան 50 կ., Թ. Չառիկեան 2 ռ., Խ. Տէփէյեան, Գ. Տէփէյեան, Ա. Տէփէյեան, Թ. Ուստեան 50-ական կոպ., Մ. Միսասեան 1 ռ., Ն. Յակովլեան 50 կ., Գ. Պաղտասարեան 60 կ., Ա. Չէպրեան 50 կ., Ա. Ալեքեան 2 ռ., Թ. Գարակէօզեան 50 կ., Մ. Տէփէյեան 1 ռ., Կ. Գալթիկեան 1 ռ., Շ. Երանտեան 60 կ., Կ. Թէկէճեան 1 ռ., Կարապետ Նահապետեան 50 կ., Գ. Թովկակեան 1 ռ., Ա. Չոլակեան 10 կ., Ա. Գարակէօզեան 1 ռ., Գ. Ճանուրեան 10 ռ., Գ. Աւետիսեան 2 ռ.: (Հանված է ճանապարհածախս 32 կոպէկ):

Ընդամենը 368 ռուբլի 60 կոպ.

Մինչեւ այժմ ստացել ենք 34,917 ռուբլի 90 1/2 կոպէկ, երեք ոսկի ուռլի եւ 50 խալապեան լիւրա: Ուղարկել ենք 34,000 ռուբլի, 3 ոսկի ուռլի եւ 50 խալապեան լիւրա: Մեզ մօտ մնում է 927 ռ. 90 1/2 կոպէկ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աստուածան, ապրիլի 27-ին
Եյսիկ Մարգարէ աւագ քահանայի միջոցով ստացած լինելով 160 ռուբլի, որը հանգանակել են իրանց մէջ տեղական հայերից 11 անձեր՝ յօրուտ Ախալքալաքի երկրաշարժից վրնամականների, ուղարկում են երկտողիս հետ խնդրելով հասցնել ուր հարկն է:

Արիստակէս արքեպիսկոպոս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խանքենցի, ապրիլի 10-ին
Խոնարհաբար խնդրում եմ երկտողիս մի անկուն հնորէնք «Մշակի» էջերում, արձանագրելու մի տեղի փաստ, որը պատկերացնում է մեր տէրութեան անուղղելի արարքները: Այս չորս տարի է, որ եւս ապրում եմ Խանքենցի աւանում եւ պարապում եմ առեւտրական գործերով. բոլոր այստեղի բնակիչները ինձ շատ լաւ եւ բարեկամաբար են վերաբերվում: Բացառութիւնը կազմում է միայն անդրական Պետրոս քահանան, որի գործողութիւնները վաղուց յայտնի են «Մշակի» ընթերցողներին: Արդէն երկրորդ մեծ պրան է, որ այդ քահանան հրաժարվում է ինձ հաղորդութիւն տալուց եւ չէ ուղղած բացատրել, թէ ինչ պատճառներով է նա այդպէս անում, քանի որ նոյն իսկ բանտարկյալներին, ծանր յանցաւորներին մեր եկեղեցին չէ զրկում այդ հաղորդութիւնից: Ես խնդրեցի մեր եկեղեցու երեցիկիս պ. Մ. Սարգսեանցին միջնորդ հանդիսանալ եւ աջակցել ինձ հաղորդվելու: Երբ որ իմ կողմից դիմում է նրան իրեցիկովը՝ Պետրոս քահանան պատասխանում է. «Ես այդ կիստօյնի սրբութիւն չեմ տայ, դրա եւ իմ մէջ արեւներ է խաղում»:

Բաւականում եմ, առանց իմ կողմից որ եւ է բացատրութիւն տալու, դնել մեր տէրութեան այս արարքը հրապարակում:

Գասպար Յովսէփեանց

V

Առնենք այս կարգադրութիւնը օրէնքի ու գործնականութեան տեսակետներից:

Բարձրագոյն հաստատութեանը մեր եկեղեցու կառավարութեան համար տրված կանոնադրութեան 1247 յօդ. (հատ. ԺԱ. հրատար. 1896 թ.) ասում է. «Արքեպիսկոպոս պաշտօնեաների ու եկեղեցական ղալիկների ստանալիք վարձերը լինում են երեք տեսակ. 1) մշտական, որ սահմանում է ծուխը նրանց պաշտօնի մէջ մտնելիս. 2) հոգեւոր պէտքերի կատարման համար ստացված տուրքեր եւ 3) կամուրջ նուէրներ: Ուրեմն մշտական, որոշ ուժիկ կապելու սկզբունքն օրէնքը թէ ճանաչել է եւ թէ պարզ կերպով այդ անկող իրաւունքը տուել է ծխին: Հետեւեալն է միայն իրաւունքի մէջ են որպիսի ճանապարհով ու միջոցներով այդ ուժիկը հայթհայթելու եւ վճարելու մասին պարտ ու պատշաճ կարգաւորելու իրաւունքները:

Գալով գործնականութեանը, նախ շատ պարզ ու դիւրին է եկամուտների այդ ձեւերի տակ դնել ու ժողովելու, եւ երկրորդ՝ եկեղեցին մեր գանձարանն առնելով քահանայական եկամուտները, ոչ միայն կորուստ չէ ունենում, այլ ընդհակառակը շահվում է, ինչպէս ցոյց տուեց Բաթումի փորձը: Առաջին տարին Բաթումի եկեղեցին մեր ուժիկները վճարելու համար պարտքի էր դիմել. երկրորդ տարին, եկամուտների կարգադրութեանը արդէն պարտքը վրձարելու հետ, կանոնաւորապէս հատուցել է եւ ուժեղացումները:

Տուրքերի այս ձեւի կարգաւորութիւնը վերացնում է սակարկութիւնը, դիւրութիւն է տալիս ամեն անգամ ճիշդ վերահսկողութիւն ունենալու մուտքի ու ելքի յօդուածների վրա եւ՝ որ ամենից զլխաւորն է՝ ծխի հարուստ ու աղքատ դասակարգին իսկապէս հաւասարեց-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը եւ քաղաքային խորհրդի յանձնաժողովը միացեալ նիստում քննելով զանազան ֆիրմաների կողմից ստացված պայմանները՝ Թիֆլիսը ելէկտրականութեամբ լուսաւորելու համար, կանգ առան «Եւրոկերտ եւ ընկ.» ֆիրմայի վրա, որ ամենից աւելի ձեռնտու պայմաններ էր առաջարկել: Քաղաքային վարչութիւնը իր այդ որոշման մասին անմիջապէս յայտնեց «Եւրոկերտ եւ ընկ.» ֆիրմայի ներկայացուցչին, որը իր կողմից հետադրով տեղեկութիւն տուեց ֆիրմայի գերկտորին: Վերջինը մօտ օրերումս գալու է Թիֆլիս՝ քաղաքային վարչութեան հետ նախապատրաստական ծրագիր մշակելու համար:

Չերնոօրեան երկաթուղային դիւ չինելու համար, Դինսկայա կայարանից մինչեւ Սուխում, կազմվում է մի ակցիոներական ընկերութիւն, որ արտօնութիւն է ստացել 85 տարի շահագործելու այդ գիծը: Եւրոպայի մէջ մի գիծ էլ անցկացնել Սուխումից մինչեւ Նովո-Սենակի 125 վերստ երկարութեամբ: Ընդհանուր առմամբ ճանապարհը Բոստօլից սկսած մինչեւ Սուխում կարճանում է 682 վերստով: Ակցիոներական կապիտալից 2,300,000 ռուբլի յատկացրած է սանատորիաներ եւ կուրորտներ չինելու Սեւ-ծովի ափերում:

Մենք առիթ ունեցանք մի անգամ եւս լսելու զաշխակահար Իօսիֆ Հօֆմանին երեքշաբթի, մայիսի 2-ին, Թիֆլիսի Կրուժոկի դահլիճում: Նուագահանդէսի ծրագիրը կազմված էր ճոխ, նրա մէջ կային բայի Շօպէնի բազմաթիւ կտորներ, Բախի, Մօցարտի, Մենդելսոնի, Բրամսի, Շոբերտի, Չայկովսկու եւ Բուրխալդիի ստեղծագործութեան յայտնի նմուշներ: Հօֆման առաջնակարգ երաժշտագէտ է. նա խորին եւ նուրբ կերպով ուսումնասիրել է երաժշտական ստեղծագործութիւնների ոգին եւ բովանդակութիւնը: Դաշնամուր երգում է եւ խօսում է նրա մասին իսկ, վերաբրտագրելով այն յուզմունքները, որ թափել են իրանց գրուածքների մէջ երաժշտագէտները: Հօֆմանը նուագում է հասարակ կերպով, առանց դիմելու տեխնիքական խաղերի, շատ համեստ պահելով իրան, բայց նրա նուագածը հիացնում է ունիդիներին եւ ազդում նրանց վրա:

Մօտ օրերումս կանոնաւոր երթեւեկութիւն է սկսված Սամարկանդից մինչեւ Անդիսան նոր չինված երկաթուղային գծի վրա, որ կազմում է Անդրկասպեան երկաթուղու շարունակութիւնը: Անդրկասպեան երկաթուղին այ-

նում է քահանայի առաջ, վերջինս, քահանայ, դառնում է մատակարարող եկեղեցու խորհուրդների, սպասաւոր Աստուծոյ տան, առանց աչք անկած լինելու ծխակաւորների գրպանին: Այսպիսով քահանան եկեղեցուն մատուցած իր հաւատարիմ ծառայութեամբ, իր պաշտօնի սուրբ ու ճիշդ կատարելով՝ աներկապելի կերպով ճանապարհ է բաց անում թէ իր բարոյական ազդեցութիւնը, բարձրացնելու, թէ ուժեղեցնելու տալու եւ թէ իր ընտանեկան վիճակը ապահովող պարագաների մէջ դնելու: Կայ արդեօք աւելի մեծ ապահովութիւն, քան թէ ժողովրդի համակրութիւնն ու բարեկամութիւնը:

Ազատվելով ամեն մի անհատից զատ զատ իր վարձը ստանալու ստորացնող պարագաներից եւ մտնելով եկեղեցու հաւաքական իշխանութեան ու դատաստանի տակ, անհղին չափով սահմանափակումն կառավարող անհատական կամայականութիւնների մէջ, աւելի հեղինակաւոր կը լինի կայացված դատաստանը: Այսպիսով կը վերանայ իրարից ծուխ յափշտակելու, աներեսաբար արաւ նրա տունը զօղով ներս ընկնելու, թագեր ու զառեր գաղելու կամ վարձով տալու, զանազան կերպերով զոգանալու, պնդերես սակարկութիւններ անելու եւ այլն դէպքերում: Այսպիսով ինքն ըստ ինքեան կառավարող իւր աշխատանքի մի եկեղեցու ծխակաւորների թիւը ճշդութեամբ ցուցակագրված ունենալու, քահանաների ու ղալիկների որոշ շատ կազմելու եւ պահելու անհրաժեշտութիւնը:

Մեծարող քահանայ Մեկեան

Բաթում:

ստեղծեալ անուանիկը է միջին-ասիական երկաթուղի:

ԵՐԵՎԱՆԻՑ ԵՄԵՂ ԳՐՈՒՄ ԵՆ. «Պարսից Շահի ընդունելութեան համար պատրաստութիւններն տեսնուած. պիտի կառուցվի յաղթական կամար, քաղաքային այգում կը լինի փառահեղ լուսավորութիւն: Արդէն կարգադրված է Ջուլֆայի ճանապարհի վրա կահուսկը եւ զարդարել իշխանները: Շահի գալը սպասվում է մայիսի 9-ին»:

ՇԻՐԱԿԻՑ ԵՄԵՂ ԳՐՈՒՄ ԵՆ. «Փաղարկան գիւղում ժամանակաւոր ընտելի մի գաղթական քահանայ, իբր թէ երազի մէջ տեսնելով որ նոյն գիւղացի Դավոյի ախոռում երեք սուրբի գերեզմաններ կան, սկսում է փորել ախոռի մէջ, յուսալով որ պիտի գտնի իր երազածը. ամբողջ գիւղում տարածվում է այդ հրաշքը եւ գիւղացիները ջերմեռանդութեամբ գնում են տերտէրի մօտ, ախոռում փորած տեղին երկրագործ եւ աշխատողը տալիս տէր-տէրին, այնպէս որ Դավոյի ախոռը մի տեսակ ուխտատեղի է դառնում: Բայց չը նայելով եւ իրաւունքը եռանդուն աշխատութեան դեմ եւս դուրս չեն գալիս փորած տեղից սրբերի գերեզմանները: Այս սոգել փաստի վրա դարձնում ենք հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը»:

ՆԵՐՔԻՆ-ԱՅՏԱՅԻՑ ԵՄԵՂ ԳՐՈՒՄ ԵՆ. «Մեր կողմերում տարածված է կապոյտ հաղ (КОЕЛЮШ) կոչված ժանկական հիւանդութիւնը, որ գտնւել է Եւրասիայի, չը նայած որ մեզանում բժշկել էլ կայ. մեծ մասը՝ շնորհիւ նախապաշարված եւ տգէտ պատանւերի, որոնք փոխանակ զինուոր բժշկին, աւելի անապատութեան են դիմում: Կը տեսնեն մի գիւղի մէջ, մի առեւտրական կիսատ պատի հիմքից խոր փորած եւ պատի միւս կողմից դուրս բերած ծակով հազացող երկխոսքներն անց են կացնում, որ առողջանայ, որովհետեւ, ինչպէս իրանք են ասում, դա պոռնիկի տուն է եղել առաջ, այսինքն այդ տան տէրը 3—4 կիւն է առել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱԿԱՍԱՆԻՑ

Ռաշտ, ապրիլի 14-ին

Մեր քաղաքը փոխվել է եւ առաջադիմական քայլեր է անում: Շնորհիւ քաղաքապետի լուրջ հակողութեան, համեմատաբար այժմ աւելի մեղքում է, քան երբ եւ իցէ. նախկին անասնա-նեղի փողոցներում, ուր գիւղերը միութեան պատճառով, առանց ճրագի գնացողը կամ գրուելը պիտի կոտրէր եւ կամ ոտը, այժմս վառվում են լապտերներ: Մեր քաղաքի օրի-որդաց զարդի շինութիւնը եւ բացման հանդէսը գրգռեց մեր լուսավոր նահանգապետի բարե նախանքը, այնպէս որ նա էլ շտապեց մի զարդը բանալու իր հաշուով եւ մի եւ նոյն կերպով բացման հանդէս կատարելու. նոր ուսուցիչ հրաւիրեց, միանշանակութեամբ եւ զիջելով լինա ժողովի զարդերը, իբր այժմս ուսանում են աւելի քան 20 պարսիկ աշակերտներ աղ-քատ դասակարգից պարսկերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներով: Բացման հանդէսին հրաւիրված էին շատ պարսիկներ եւ հայերից շատերը, հոգաբարձութեան անդամները, քահա-նան եւ ուսուցիչները: Երբեք մէկ պարսկա-կան երգեր եւ նուագում էր զինուորական ե-րաժշտութիւնը: Այդ զէպը գրգռեց եւ մի ուրիշ հարուստի, այն է՝ նրա—Փարսաբաշու բարե նախանքը եւ նա էլ մի երկրորդ զարդը բացեց իր հաշուով. այնպէս որ այժմ, չը հաշ-ւելով բազմաթիւ մուլականները, մի քանի ասորիական զրանից բարձր երեք պարսկական զարդ կայ:

Բայց որ ամենագլխաւորն է, մեր նահանգապետը չէ խնայում իր օգնութիւնը եւ աշակերտութիւնը ամեն բարի եւ առաջադիմական ձեռնարկութեամբ: Մօտ ժամանակներումս Բերլինի պարսից դեսպանը այցելեց մեր զըպ-րոցները, եւ պ. Սարգիս Թումանեանցին. այդ առիթով նահանգապետը նուիրեց մեր զարդ-ներին հոգի այն կտորը, որ գտնվում է զարդ-ցանկից առաջ կից եւ միշտ արեւելք էր հանդիսա-նում շտապող նախագիծած զարդից շինութեան: Շատ անգամ զինուորներ են եղել նախկին նա-հանգապետներին մեր հոգաբարձութեան կող-մից, բայց չէր աշոգլիլ ձեռք բերել այդ գե-տինը նոյն իսկ փողով: Շնորհիւ այդ հանգա-մանքի հաւանական է, որ չուսումը կը ձեռ-նարկվի ապագայ զարդի շինութեանը, որի կա-րիքը շատ վաղուց զգացվում է: Յանձնաժո-

ղովը արել է մի քանի որոշումներ եւ հան-գանակել է 3000 թումանի չափ մի գումար եւ մի քանիսը խոստացել են շինութեան մի քանի նիւթերը նուիրել ձրիաբար:

Ամսիս 11-ի եւ 12-ի գիշերները մեր ուղու-ցիչները ներկայացում տուին, որն անցաւ շատ աշուղ եւ մուտքը բաւարար: Բայց դարձեալ նոյն տրտուշները եւ գանգաւները, որ կըր-կնվում է ամեն անգամ տեղի ներդրեան պատճառով: Այժմ բաւական բազմացել է տե-ղիս գաղթականութիւնը, մանաւանդ մեծ բազ-մութիւն կայ եւրոպայիցների եւ պարսիկների, որոնք ցանկանում են ներկայ լինել մեր ներ-կայացումներին, բայց անկարող են լինում ի նկատի առնելով շատ անյարմարութիւններ:

Եւրոպական գաղութը հետզհետէ աւելանա-լով՝ ձեռնամուխ է եղել մի կուրս հիմնելու եւ արդէն հանգանակութիւն է բացվում այդ նը-պատակով ու մի մեծ շինութիւն է վարձած քաղաքի աչքի ընկնող տեղում:

Այս տարի չափազանց մեծ քանակութեամբ չերամի սերմ են բերած վաճառելու յունական եւ եւրոպական զանազան ֆիրմաներից. ուստի եւ այժմ սերմի գործը մեղմանում շատ վատ դրութեան մէջ է գտնվում: Այդ գործով պա-րագող տեղացի թէ հայ եւ թէ պարսիկ վա-ճառականները, չը նայելով որ գիւղացիների հետ պայման ունեն կապած աշուճականի, այնու ամենայնիւ դարձեալ գտնվում են անե-լանելի դրութեան մէջ, որովհետեւ գիւղացի-ները յետ են բերում իրանց տարած սերմերը եւ կամ չեն տանում, ենթակայ լինելով իրանց հողատիրոջ եւ կամ նահանգապետի խոսու-թիւններին, որոնք ստանալով այս կամ այն վաճառականից կամ սերմատիրոջից մեծ գու-մար, ստիպում են գիւղացուին նրանց սերմ տանել միւսները համարելով վատ: Եւ այսպէս ա-հագին գնաղաւորներ է, որ ամեն օր մտնում են թէ պարսից դատաստանները եւ թէ հիւ-պատոսարան: Աւուրանալի է, որ արդարադա-տութիւնը կաշառքի կողմն է եւ այն էլ մեծ կաշառքի:

Այն այդ քանի մի նոր ապացոյց. Պարսկա-ստանում եղած սովի պատճառով բաւական մեծ բազմութիւն զանազան քաղաքներից ընտանի-քով եւ երկխոսքով թափել եւ թափվում են Գիւրան—Ռաշտ իրանց զուրկ պահելու՝ բուսե-ղէն եւ բրինձ ուտելով: Այդ բանը մեծ աղբը-ցութիւն արեց եւ քիչ քիչ արեւելք վրա, որը ասորիական բարձրանալով՝ այժմ առապե-լական չափի է հասել: Ժողովրդի արտոնջը եւ գնաղաւոր հետզհետէ աւելացան, այնպէս որ նահանգապետը ստիպվեց հրամայել, որ այլ տան բրինձ չարտահանվի ոչ զէպի Ռուսաս-տան եւ ոչ զէպի Պարսկաստան: Բայց այդ հրամանը ըստ սովորականին մի քանի օր մի-այն տեւեց, այնուհետեւ դարձեալ կաշառք կատարեց իր գործը. ապաստուրները, վերա-կացուները եւ պահապանները, որոնք հսկում էին բնականիւրների վրա, առնում էին իրանց բաժինը եւ արձակում: Մի երկրորդ եւ աւելի խիստ արեւելք մի քիչ աւելի տեւողական ե-ղաւ: Ահա այդ ժամանակ էր, որ ռուսաց մի զինուորական տանում էր 4 հատ ձի, որպէս նուէր արեւմտափայլ շահին. նրան հետեւում էր մի սալ՝ ձիաների համար դարի բարձած. պա-հապանները, սինդրով թէ դա բրինձ է, աշխա-տում են արեւելք հանդիսանալ, բանը հասաւ այնտեղ, որ քիչ մնաց սպանութիւն լինէր, բայց ճանապարհի պահականոցի ծառաները շուտ վրա հասան եւ գործը հիւպատոսին հասաւ:

Մեր կողմերում յայտնվել են նոր աւազա-կային խմբեր. մեզ լուր հասաւ, որ պարսից պատը, որ գնում էր Թաւրիզից Դաղվին, կո-ղովակացի Գողաղված է աւելի քան 1500 թուման ոսկի եւ թղթագրամ. արծաթ դրամին ձեռք չեն տուել: Չը նայելով պարսից կառա-վարութեան ձեռք առած լուրջ միջոցներին, մինչեւ այժմ աւազակները չեն գտնված:

Դաղվինից մեզ հաղորդում են, որ ամսիս 7-ին փառաւոր հանդիսով մուտ գործեց քա-ղաք պարսից Շահը բազմաթիւ զօրքերի եւ մեծամեծների ուղեկցութեամբ: Դաղվինեան պահակներ, որ քաղաքից 3 վերստ հեռու է գէպի Թէհրան տանող ճանապարհը, զիմառ-րեցին ճանապարհի ծառայողները եւ կառա-վարիչը՝ ռուսաւորները: Շահը ճանապարհից գէպի Թաւրիզ կիրակի, ամսիս 9-ին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Temps» լրագիրը հետեւեալն է գրում Բո-բերտի տաղանդեղ չարժան մասին. «Ամեն ինչ ապացուցանում է, որ Բոբերտը վարում է

պատերազմը սխտեմատիկաբար, առանց շտա-պելու. ռազմավարութեան այդ եղանակը լաւ պտուղներ տուց Բոբերտին Աւստրալիայում եւ կիտլենդերին—Եգիպտոսում: Գրաւելով Բլում-ֆոնտէն Բոբերտը հանգստացաւ այնտեղ, որպէս հարկն էր: Յետոյ նա դուրս քեց բոլորներին նստալի հարաւ-արեւելեան անկիւնից եւ մաք-րեց Օրանսեան հանրապետութեան հարաւա-կողմը թշնամուց, ապահովացնելով իր հաղոր-դակցութեան ճանապարհները: Հարաւ-արեւել-կական պատերազմը մի անգլին, դանդաղ եւ դժուար պատերազմ է, որի մէջ գերազանց թիւն անշուշտ աշոգութիւն կը գտնի. եթէ միայն անգլիայիցները քաջութիւն եւ համա-րութիւն ունենան չարունակելու պատերազմը: Կը կարողանայ արեւօք Անգլիան տալ իր դե-ներանքներն ժամանակ, դրամ եւ զինուոր այդ-պիսի երկարատեւ պատերազմը յաղթանակով վերջացնելու համար: Ահա այս է գլխաւոր հարցը»:

—«Berliner Tageblatt»-ի թղթակիցը հաղոր-դում է Կ. Պոլսից, թէ սուլթանը հրատարակել է մի իրադէ, որով արգելում է թիւրքահալա-տակներին նամակներ ուղարկել կամ ստանալ օտար պետութիւնների փոստային հիմնար-կութիւնների միջոցով, որոնք գոյութիւն ունեն Թիւրքիայում: անկախ թիւրքական փոստային վարչութիւնից: Այդ կարգադրու-թեան նպատակն է արգելել երիտասարդ-թիւրքայի կուսակցութեան հրատարակու-թիւնների ներմուծումը արտասահմանից եւ առհասարակ վերահսկողութիւն հաստատել թիւրքերի արտասահմանեան գրադրութեան վրա. բացի դրանից՝ դա նախապատրաստու-թիւն է իսպառ ջնջելու օտար պետութիւննե-րի փոստային հիմնարկութիւնները, եւ հէնց այդ նպատակով Բ. Դուրը պատրաստել է մի ծրագիր բարեփոխելու թիւրքական փոստը:

—Շվեդական մամուլը հաւատ չէ ընծայում «Daily Express» լրագրի հաղորդած տեղեկու-թեանը, որի մէջ բերված էր Օսկար Թագաւորի կործնել անգլո-արաւմատական պատերազմի մասին: Ստոկհոլմի լրագիրները մէկն ասում է. «Դժուար է հաւատալ, որ շվեդական Թա-գաւորը վարվէր այդպէս անբաղադրաբար եւ կարծիք յայտնէր բոլորովին ինպատ տեղ-լիացիների Օսկար Թագաւորը շատ քաղաքա-վարի եւ չընդհանր մարդ է. նա չէ կարող խօսել այնպէս, որպէս հաղորդում է անգլիա-կան լրագիրը: Եթէ «Daily Express»-ի թղթակ-ցին երբ եւ իցէ ընդունել է թագաւորը, որ շատ կաւածելի է, յամենայն դէպս սակ է նրան ոչ այն, ինչ որ հաղորդել էր լրագիրը»:

—Ֆրանսիական նացիօնալիստները, վերջին ընտրութիւնների ժամանակ Պարիզ քաղաք-այն խորհրդում մի տանեակ տեղ գրաւած լի-նելու պատճառով՝ ահագին աղմուկով տօնում են իրանց «Կալիֆանակը» «Figaro» լրագիրը այդ մասին գրում է. «Քաղաքային խորհրդի ընտրութիւնները չը փոխեցին հանրապետու-թեան նախագահին, մինիստրներին, ոչ էլ պատգամաւորների ժողովին եւ սենատի մե-ծամասնութիւնը, հետեւապէս չէ կարելի ասել, թէ այդ ընտրութիւնները որ եւ է քաղաքա-կան նշանակութիւն ունեն: Ընտրութիւնների միակ հետեւանքը այն կը լինի, որ բոլոր մինիս-տրները եւ չա՛հ ունեցող կուսակցութիւնները աւելի եւս սերտ կապով կը միանան միմեանց հետ եւ քաղաքական տարաձայնութիւնները նորից կը սկսեն վրդովել Ֆրանսիան, երբ հա-մաշխարհային ցուցահանդէսը կը վերջանայ եւ կը դադարի լաղապարար աղբեցութիւն ունե-նալուց ամենքի վրա»:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 մայիս

ԲՈՒԴԱՊԵՇՏ: Սլավոն ճառիս Գօլուխովսկի պատասխանեց. «Սլավոն ասածը չէ համապա-տասխանում եղելութեանը: Սլավոն ասում է, թէ արտաքին գործերի մինիստրը խառնվում է Աւստրիայի ներքին գործերի մէջ. մինիստրը մի քանի անգամ հերքել է այդ մեղադրանքը, որը նորից կրկնվում է: Դա ինչեղան է ռու-սաց ասածը—«ПОПЬ СВОЕ, ЧОПЬ СВОЕ» (քահա-նան իրն է ասում, սատանան—իրը): Սլավոն խօսում է իր ցեղակիցների եւ մինիստրի մէջ եղած կուռ մասին, բայց կուռ համար հարկաւ-որ են երկու հակառակորդները, այն ինչ մի-նիստրը երեւեք չէ արել մի այնպիսի բան, որ կարողանար վնասել չեխական ազգին: Սլավոն երկիւղ է կրում, թէ Աւստրո-Ունգարիայի մե-ծաւոր յարաբերութիւնները դաշնակիցների հետ կարող են չեղել նրան միջին ճանապար-հից, որ կայանում է լաւ յարաբերութիւններ պահպանելու մէջ թէ դաշնակիցների եւ թէ միւս հարեւան պետութիւնների հետ: Սլավոն հարկ եղած ուշադրութիւնը չէ դարձրել Բարձ-րագոյն ճառի եւ մինիստրի բացատրութիւննե-րի վրա: Նրանց մէջ լիակատար պարզութեամբ ասած է, թէ դաշնակցութիւնը լրագործվում է լաւ յարաբերութիւններով Ռուսաստանի եւ միւս պետութիւնների հետ: Սլավոն ասում է, թէ Սերբիայում եւ Բուլղարիայում այլ եւս

աւստրիականները չը կան: Եթէ նա կարծում է, որ աւստրիական քաղաքականութեան նպա-տակը այդ երկրներում կուսակցութիւններ ստեղծելն է, որոնք ծառային Աւստրո-Ունգա-րիային, այն ժամանակ մինիստրը պէտք է նկատէ, որ Ռուսաստանի հետ կապած համա-ձայնութեան էութեամբ, Աւստրո-Ունգարիան չէ կարող խառնվել այդ պետութիւնների ներ-քին գործերի մէջ: Դրանով ընդհարումների տապալն առնվում է:

ԱՍՏՐԱԽԱՆ: Գուրեւի ձկնորսարանում, Էմբա գետի վրա, գտնված է ձկնորսի նոր գե-րիքանաւուսուն. ոչնչայրած է 4,000,000 ձուկ: ՎԻՆԴՆԱՆ: Էլզէ կղզուց եկող «Իօնանէա» չղեկնաւոր խորտակվեց 29 ճանապարհորդների հետ միասին:

Կ. ՊՈԼԻՍ: Սուլթանը շնորհաւորեց յունա-կան թագաւորին արքայադուստր Մարիայի պատկառութիւնը: Թագաւորը պատասխանեց ջերմ շնորհակալութեամբ:

ԼՕՆԴՕՆ: Բուլղեր հեռագրում է Կեմպֆեր-մից. «Մեք գրաւեցինք Դէնդին 2,500 բօէր-ներ գնացին դէպի Գլէնկո»:

ԿՐՕՆԵՏԱՒՆ: Բօէրները կենտրոնացնում են իրանց ոյժերը Վալ գետի վրա. թշնամին հե-ռացաւ Բիզգարեան լեռների զիրքերից: Երկա-թուղային գծի ուղղելը մինչեւ Կրօնշտադտ կը վերջանայ հինգաթիւ օրը: Ուստիւղէնների մա-տակարարում կատարվում է կանոնաւոր կը-պով: Զօրքերի առողջապահական դրութիւնը լաւ է:

ՄԵԼԲՈՒՐՆ: Բրիտանում ժամտախտից հի-ւանդանալու չորս նոր դէպքեր տեղի ունեցան: Սիդնեյում ընդամենը եղել են 237 դէպքեր, որոնցից 74-ը վերջացել են մահով:

Կ. ՊՈԼԻՍ: Մինիստրների խորհուրդը քննում էր Ֆրանսիական երկաթուղու նախագիծը, որ շինվելու է Սերբիայում: Նախագիծը ներկայաց-րած է սուլթանին հաստատելու:

ՊԱՐԻՉ: Երեկոյան Երեսան դաշտերում տեղի ունեցաւ պայթուի: Ոստան են պայ-թուրիկ ուռւեր մասին: Ոստիկանութիւնը հաւատացնում է, թէ պայթուի առաջացել է կառքի անի տակ ընկած պիկրատից: Մարդ-կային գոհեր կամ այլ վնասներ չը կան:

Ցուցահանդէսի ելեւթուրական բաժնի շինու-թեան փայտեղէնի մէջ հրդէ՛ ընկաւ: Կրակը շուտով հանգրցելի վառվեց: Նրի ամբարը եւ բազմաթիւ կէկտրական լարեր:

3 մայիս

ԼԻՍԱԱԲՕՆ: Լուրերին նայելով Կրիւզեր ա-ռաջարկեց պորտուգալական հիւպատոսին հե-ռանալ Տրանսիլաւիցի:

ՆԻՒԻՐՕԿ: Եկաւ այն չղեկնաւոր, որի մէջ են բօէրների պատգամաւորութեան անդամնե-րը:

ՍՕՖԻԱ: Ամբողջ Բուլղարիայում տիրում է կատարեալ խաղաղութիւն եւ կարգ:

ԿՐՕՆԵՏԱՒՆ: Բաղէն-Պոսէլ հաղորդում է, թէ Մեֆկինգում ամեն ինչ բարեկալով գրու-թեան մէջ է: Զերմից աւելի քիչ մարդիկ են ընկնում: Բիզգարեան գործը առողջ եւ գլուարթ է: Ուստիւղէնների պաշարը կը բաւականանայ մինչեւ յունիսի 10-ը:

ԼՐԵՆԵՐՈՒՄԱՐԿԵՉԷ: Բօէրները տիրեցին կաֆրների արուարձանը Մեֆկինգի մօտ, բայց ենթարկվեցին յարձակման եւ չը պատվիրեցին. այդ ժամանակ նրանցից սպանվեցին 9 եւ վի-րաւորվեցին 19 հոգի: Անգլիայիցները ծանր կորուստ ունեցան:

ԼՕՆԴՕՆ: Համայնքների ժողով: Բրօգրիկ յայտարարեց, թէ կառավարութիւնը չէ ստա-ցել հաստատող տեղեկութիւն այն մասին, որ իբր թէ Զինատանը թղթ է տուել ուսանողներին երկաթուղի շինել Բայկալի փոխից Կեախտայի վրայով մինչեւ Պեկին:

ՎԱՇԻՆԴՏՕՆ: Մինիստրների խորհուրդը, քննելով բօէր պատգամաւորների ընդունելու-թեան հարցը, որոնց ընդունել նրանց այնքան չեղ, որքան թղթաւորելի է համարվում զիպ-լոմատիական կարգերի տեսակետից: Եթէ ե-րեւայ, որ պատգամաւորները պաշտօնաթղթեր ունեն ներկայացնելու կառավարութեանը՝ նը-րանց միջոց կը արվի ներկայացնելու. բայց որովհետեւ, կառավարութեան ունեցած տեղե-կութիւններով՝ պատգամաւորները զիպլոմատ-ների կոչումն չունեն, ուստի եւ հարցը հեշ-տանում է:

ՆԻՒԻՐՕԿ: Բօէրական պատգամաւորներին զինաւորելու համար կազմված յանձնաժողովի 9 անդամները ճանապարհ ընկան դիւաւորելու նրանց: Ուստի վաղօրօք դնաց չղեկնաւոր տե-ղեկացնելու պատգամաւորներին գործերի զը-րութեան մասին եւ առաջարկելու նրանց իր աջակցութիւնը:

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.